քրիստոնեայ և, մասնաւորապէս, հայ տարրը մասամբ ջարդուեց, մասամբ կարողացաւ փրկուել փախուստի միջոցով։

Արդահանի շրջանի այդ դէպքերը բուռն վէճերի առիթ տուին Սէյմի մարտ 5 նիստում։ Հայերը և վրացիների մի մասը մեղադրում էին մահմեդականներին, որ դէնք են ծառայում «մութ ուժի» ձեռքին, որը ձգտում է կործանել Կովկասը։ Մահմեդական պատգամաւորները ջղայնացած պաշտպանւում էին և, իրենց հերթին, յարձակւում Դաշնակցութեան վրա, որը, իբր թէ, պատճառ է դառնում մահմեդական շրջանների աւերումին։

Նոյն օրերին Սէյմում քննութեան նիւթ եղան և Գանձակի ընդհարումները, որոնք միևնոյն աստառն ունէին — թիւրքական պրովոկացիան։

Փետրուարին թուրքերը յարձակուեցին կայարանից հայկական մասը անցնող մի խումբ, պատերազմի դաշտից վերադարձող, հայ զինուորների վրա և նրանցից 12ին սպանեցին։ Զինուորները դիմեցին ինքնապաշտպանութեան և նոյնպէս սպանեցին մի քանի թուրքեր։ Իսկոյն, Գանձակում հայ և թուրք թաղերը դիրքեր բռնեցին միմեանց դէմ, և քաղաքը ստացաւ պատերազմական բանակի կերպարանք։ Անդրկ. Սէյմը ուղարկեց պատուիրակութիւն՝ խնդիրը տեղն ու տեղը կարգադրելու համար։ Պատուիրակութեան մէջ մտան Գեր. Մախարաձէն, Աւ. Սահակեանը, Շահթախտինսկին և Խոր. Համասփիւռը, իբրև դանձակեցի գործիչ։ Մարտ 2–ին մի խառն պատուիրակութիւն էլ ուղարկեցին Բագուի Հայոց և Մահմ. Ազգ. Խորհուրդները՝ բաղկացած Բեհբութ Ջիւանշիրից ու բժ. Ռաֆիեւից և Հայկ Տէր–Միքայէլեանից, Գ. Եւանդուլեանից, Գեր. Շահնազարեանից, Ցակ. Մանանդեանից ու Մարտին Շաթիրեանից։

Պատուիրակութեան առջև բացուեց այսպիսի պատկեր. յունուարի կէսից սկսած, ինչպէս որ երկաթուղիներով երթեւեկութիւնը հայերի համար կտրուած էր, բոլորովին կտրուել էր և Գանձակի հայերի և թուրքերի փոխյարաբերութիւնը, որովհետեւ կայարանում, շուկայում և, առհասարակ, թուրքական թաղում (որ քաղաքի մեծ մասն է) բոլոր պատահած հայերին անխտիր թուրքերը սպանում էին։ Դրանից յետոյ թէ թուրքական և թէ հայկական մասերը դարձել էին երկու թշնամի բանակներ, որոնք պաշտպանւում էին խրամատներով սահմանի ամբողջ երկարութեամբ, մշտական պահակներով և պատերազմական բոլոր օրէնքներով։ Կայարանը և երկաթուղին թուրքերի մասումն էին, ուստի վերջիններս ազատ կապւած էին արտաքին աշխարհի հետ և օգտւում էին ամէն յարմարութիւնից՝ ստանալով զինամթերք և ուտեստ։ Իսկ հայերը, պաշարուած բերդի նման, սպառում էին իրենց վերջին մթերքը. նրանք չափազանց դժուար և պատահական կապ կարող էին պահպանել լեռների հայկական գիւղերի միջով Դիլիջանի և Շուշիի հետ»։*)

Բացի ընդհանուր պատճառից, Գանձակում կար ընդհարումների և մի յատուկ առիթ. Թիֆլիսի կենտրոնական զինուորական իշխանութեան որոշումով թուրքերը պէտք է ստանային ռուսական 269րդ գնդի ամբողջ զոյքը, որի մի մասը — ռումբ ու փամփուշտ — գտնւում էր թուրքական թաղում և թուրքերն արդէն առել էին, իսկ միւս մասը — մի քանի հազար հրացան,

*) Մ. Շաթիրեան, «Դրուագներ Մօտիկ Անցեալից», «Հայրենիք» ամս. 1923թ. № 7։